

Մ Ա Ն Ր Ա Լ Ո Ւ Ր Ք



ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆՔ.

Ռուսաստանի մարդասիրական ընկերութեան հրատարակած հաշիւներէն կտեսնուի որ այս տարի՝ միայն յունիս ամսուան մէջ՝ ընկերութիւնը հետագայ նպաստները բաժնէր է Փեթրպուրկի մէջ. ա) հիւանդանոցաց եւ որբանոցաց մէջ գտնուող 920 չքաւորաց, եւ 29 որբ կամ աղքատ աշակերտաց ապրուստին համար 10,515 ռուպ. 19 քով. բ) 68 աղքատի տրուելիք հաստատուն ողորմութիւն 579 ռուպ. եւ գ) 419 աղքատաց միանգամ բաժնուած ստակ 2,770 ռուպ. Այս գումարին մէջ է նաեւ 139 ռուպլի, որով պարտքի համար բանտ դրուած երեք հոգի հանուեր են բանտէն: Բաց յայնմանէ 800 աղքատ հիւանդաց նպաստ եւ գեղ բաժնուեր է բժշկաց ձեռքով:

Այսպիսի բարերարութիւնները հռչակելը պարտք կհամարիմք մեզի, վասն զի կյուսամք թէ նաեւ ողորմածութիւնը եւ գթասիրութիւնը որ եւ իցէ ժողովրդեան մէջ յորդորուելու համար՝ կարօտ է միշտ բարի օրինակներու:

ՖԷՅՆ ԳԵՐՄԱՆԱՑԻՆ.

Յուլիսի 22ին վախճանեցաւ Քերսոն քաղաքին մէջ Ֆէյն անունով հռչակաւոր գերմանացի երկրագործ կալուածատէրը: Այս պատուաւոր ծերունին 71 տարեկան էր, եւ կթողու իւր ժառանգներուն Խրիմու մէջ 150 հազար տեսեալին երկիր ու 580 հազար գլուխ մերինոս ոչխար: Ֆէյն բոլոր իւր կենացը մէջ ձեռքէ ձգած չէր իւր գերմանական անպաճոյճ վարմունքը եւ սովորութիւնները. ուստի բովանդակ այն ահագին հարստութիւնը գիղած էր աշխատասիրութեամբ ու զգուշաւորութեամբ. իսկ այն հարստութիւնը մնաց երեք աղջկանցը, որ կարգուած են, եւ քանի մը թուներուն: Հայրը իրեն թողած է եղեր քանի մը գլուխ ոչխար, եւ որդին խաշնադարմանութեան արուեստը լաւ գիտնալովը միայն բոլոր այս կողմերուս առաջին խաշնադարմանն եղած էր:

ՕՐԱՑՈՅՑ

1865 ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ.

Առաջիկայ տարւոյն Օրացուցին տպագրութիւնը աւարտեցաւ ի Խալիպեան Տպարանիս հանդերձ ընդարձակ ցուցակներով ազգային երեւելի անձանց այլ եւ այլ կողմանց:

Պատկերազարդ օրացոյցներուն գինն է 20 քով. արժաթ. իսկ առանց պատկերի եղածներունը 15 քով: